№ 8 Հինգշաբթի Յունվարի 21 — 1888 — Հինգշաբթի Յունվարի 21 № 8

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ՆԵՐԿԱՅ 1888 ԹՒԻՆ

# „ՄՇԱԿ“

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

*Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական* ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լևոն XIII պապը. Տիսայի պատասխանը. Թիւրքիայի պարտքը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Պալէստինայից.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱՍԽԱԲԱԴԻՑ, Շահբաղեան եղբայրները ուղարկել են մեզ 10 ռուբլի, որպէս զի այդ փողով «Մշակի» մի տարեկան օրինակ ուղարկենք Նուխու հայոց երկսեռ դպրոցին։ Բայց որովհետև Նուխու դպրոցը արդէն ստանում է «Մշակի» մի օրինակ, այդ պատճառով ուղարկելով դպրոցին այդ երկրորդ օրինակն էլ, որ նուիրել են Շահբաղեան եղբայրները, խնդրում ենք դպրոցի հոգաբարձութեանը «Մշակի» օրինակներից մինը յատկացնել արական դպրոցին, իսկ միւսը իգականին։

—

Ղուբայից պ. Ցարութիւն Մէլիք-Դաղայեանց խնդրում է մեզ տալ հետևեալ մանաւոր յայտարարութիւնը. «Խորին շնորհակալութիւնս յայտնում եմ այն բոլոր անձանց, որոնք թէ հեռագրով և թէ նամակով յայտնել են ինձ իրանց ցաւակցութիւնը ծերունի հօրս, Գրիգոր քահանայ Մէլիք-Դաղայեանցի մահուան առիթով։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են որ յունվարի 16-ին պ. Կարա-Մուրզայի երգեցիկ խումբը կօնցերտ տուեց Թաղիեվի թատրոնում։ Կօնցերտը շատ աջողված կարելի է համարել և երգերը բոլորն էլ շատ դեղեցիկ կերպով անցան։ Հասարակութիւնը վարձատրեց պ. Կարա-Մուրզային ոգևորված ծափահարութիւններով։ Ցաւալի է միայն, աւելացնում է մեր թղթակիցը, որ Բագուի հարուստ հայերը անտարբեր կերպով են վերաբերվում դէպի այդ տեսակ երաժշտական գեղեցիկ երեկոները։ Թղթակիցը վերջացնում է իր նամակը կարեալ աջողութիւն ցանկանալով պ. Կարա-Մուրզային և ապագայում։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են։ «Երևում է որ Ռուսաստանում սաստիկ ցրտեր են սկսվել, որովհետև զանազան չուող թռչունների ձայները թնդացնում են այժմ մեր կողմերի օդը։ Թռչունները գալիս են մեզ մօտ Վոլգայի կողմերից և ծովեզերով անցնելով դէպի հարաւ, ուղևորվում են դէպի Պարսկաստան և ուրիշ տաք երկիրներ։»

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ, որ այդ քաղաքի կառապանները իրանց վարմունքով անտանելի են դարձնում մանաւանդ օտար տեղերից եկած ճանապարհորդների համար քաղաքի մէջ ֆաէտոնով շրջելը։ Բագուի կառապանները յայտնի են որպէս կօպիտ, յանդուգն մարդիկ և միշտ տակսայից աւելի բարձր գին են պահանջում ճանապարհորդից, նրան ֆաէտոնով քաղաքում ման ածելուց յետոյ։ Թղթակիցը քաղաքային վարչութեան ուշադրութիւն է հրաւիրում այդ հանգամանքի վերայ։

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ հետևեալը։ «Այստեղի հայոց հասարակութիւնը այնպէս էլ սառնութեամբ և վերին աստիճանի անտարբերութեամբ է վերաբերվում դէպի հայոց թատրոնը, իսկ մի հայ պարոն, որ գրում է թատրոնական բէցէնզիաներ Բագուի «Касній» լրագրում, կարծես աւելի էլ աշխատում է սառեցնել հասարակութիւնը հայոց թատրոնից։ Այդ հայ պարոնը իր բէցէնզիաներում աջ ու ձախ հայհոյում, պախարակում է հայ դերասաններին, առանց որ և է հիմնաւոր պատճառի, իսկ նրա բէցէնզիաները, առհասարակ, վկայում են իրան գրողի կատարեալ տգիտութեան մասին, քանի որ նա մի գլուխ գործ է ածում իր գրուածներում այնպիսի բառեր և տերմիններ, որոնց իմաստը ոչ ինքն է հասկանում, ոչ էլ իր ընթերցողները։»

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ներկայ 1888 թվին ամբողջ Ռուսաստանում կը կատարվի ժողովրդագրութիւն։ Այդ ժողովրդագրութեան ծրագիրը կազմել է ներքին գործերի մինիստրութեան ստատիստիական մասնաժողովը։ Դիտաւորութիւն կայ, եթէ հնար կը լինի, կատարել ժողովրդագրութիւնը ամեն տեղ միաժամանակ և մի օրում։ Կարձանագրվեն ոչ թէ անհատներ, այլ ընտանիքներ։ Ծախսը այդ ընդհանուր, համառուսական ժողովրդագրութեան վրա նշանակված է 3 միլիոն ռուբլի։

—

Պետերբուրգում հիմնվում է ժուժկալութեան ընկերութիւնը, որի անդամները պիտի պարտաւորվեն երբէք չը գործածել որ և է ոգելից խըմիչքներ՝ ոչ գինի, ոչ արաղ, ոչ էլ գարեջուր և այլն։ Ընկերութեան կանոնագրութիւնը նման կը լինի արտասահմանում գոյութիւն ունեցող նոյն տեսակ ընկերութիւնների կանոնագրութիւններին։

—

Մեր յայտնի հայագէտ պ. Էմինի յօբելեանին Փարիզի «Արևելեան կենդանի լեզուների» դպրոցի պրոֆէսոր պ. Կարիէր (Carrière) մատուցել էր մի ֆրանսերէն լեզուագիտական բրոշիւր, որ ինքն կազմել էր դպրոցի յանձնարարութեամբ, Էմինին յարգելու համար։ Այժմ պ. Կարիէր ուղարկել է մեզ այդ բրոշիւրը, որ կրում է հետևեալ վերնագիրը. «Un ancien glossaire latin-arménien». Դա քաղված է IX դարում արտագրված մի ձեռագրից, որ գտնվում է Antun-ի սեմինարիայի գրադարանում և որ պարունակում է իր մէջ հայոց բառերի մի մեծ քանակութիւն, որոնք գրված են լատիներէն տառերով։ Պ. Կարիէր ապացուցանում է թէ ձեռագրի հեղինակը ինքն չը գիտէր հայերէն, և մտցրել է հայոց բառերը իր գրուածքի մէջ մի հայի թելադրութեամբ։ Այդ հանգամանքից առաջ են եկել ձեռագրում անթիւ սխալներ, առաջ է եկել հայոց բառերի սխալ և տարօրինակ տառագրութիւն, որ կատարելապէս այլակերպում է հայոց բառերի հնչիւնները և արտասանութիւնը։

—

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՆԱՄԱԿ ՊԱԼԵՍՏԻՆԱՑԻՑ

—

Երուսաղէմ, 20 դեկտեմբերի 87

Որովհետև ի սկզբանէ հետէ սովորութիւն եղած է ամենայն աղգաց քրիստոնէից ուխտի երթալ Երուսաղէմ և այց ելանել այն նուիրական և յաւերժայիշատակ տեղեացն, վասն որոյ և ես ուխտաւոր ոմն, նոյն վայրիցն այցելելով, հարկ կը համարիմ գրել անոնց նկարագրութիւնը։

Ուխտաւորք Երուսաղէմ երթալու համար, նախ կը հանդիպին Եաֆա կամ Յոպպէ քաղաք, որ Միջերկրական ծովին եղերք մի փոքր բլուրի վերայ կառուցեալ է և 10,000 բնակիչ ունի։

Աւանդութեամբ կըսուի թէ Նոյի Յաբէթ որդին հիմնարկեր է զայս։ Հայոց, յունաց և լատինաց մեծ վանատուներ և հիւրանոցներ կան Յոպպէի մէջ զուխտաւորս հիւրընկալելու համար։ Վեհապետեան Ցարութիւն ս. Պատրիարք աստ շինել տուել է տուներ և խանութներ վարձու տալու յօգուտ Երուսաղէմայ ս. Յակոբայ միաբանութեան։ Յոպպէի մէջ ծովէն մօտ մինչև ցայսօր կանգուն կայ Սիմօնի խաղողորդիի այն տունը, ուր Պետրոս առաքեալը տեսիլք տեսաւ։ Եաֆայի չորս կողմը պարտէզներով ու այգիներով շրջապատեալ է. գլխաւոր բերքն է փորթոկալ, լիմոն, թուզ և այլ պտուղք. շատ բարեկի և պտղաբեր երկիր է, սակայն մշակութիւն սակաւ։ Յոպպէէն մինչև Երուսաղէմ կառքով 12 ժամուան ճանապարհ է։

Երուսաղէմ, կամ ըստ արաբացոց Քուտսէ Շէրիֆ, կառուցեալ է ի վերայ չորից տափարակ բլրոց, Սիոնի, Մօրիոյ, Ակրայ ու Գողգոթայի, և 100 ոտնաչափ բարձրութեամբ պարսպօք ու կիսաւեր աշտարակօք շրջապատեալ, չորս դուռ ունի՝ Եաֆայի, Դամասկոսի, ս. Ստեփանոսի, Դաւթի կամ Փրկչի։

Երուսաղէմայ արևմտեան կողմը դաշտային է, իսկ միւս կողմերն Գեհոնի, Յոսափատու, Գեթսեմանի և Հեղեղատի ձորերով շրջապատեալ։ Աւանդութեամբ կըսուի թէ Մելքիսեդէկ քահանան հիմնարկեր է 2,000 տարի Քրիստոսէ առաջ և կոչեր է Սալիմ (որ է խաղաղութիւն) և ապա կոչուեր է Երուսաղէմ։ Շատ մեծամեծ աւերումներ, կործանումներ, հրկիզութիւնք և աւարառութիւնք եղեր են յԵրուսաղէմ մինչև այս դարուս սկիզբները։ Օդը բարեխառն է և առողջարար. ամրան 6—7 ամիսները դրեթէ չի անձրևեր, և ձմեռ շատ ձիւն ու ցուրտ չըներ. շրջակայք քարոտ ու ժայռոտ ըլլալուն պատճառաւ մշակութիւն շատ սակաւ է. երկրին բերքն է ձիթենի, թուզ, խաղող, գարի և ցորեան սակաւ. անտառ բնաւ չունի։ Քաղքին փողոցները եղ և էջ ու անձուկ են, վասն որոյ ուղտ, էշ, ձի և ջորի միայն կը գործածեն իրենց պիտոյից համար, կառքի գործածութիւն չունեն. շուկաները ցած կամարներով սալայատակ և անշուք են, տուներ երկյարկ կամարակապ և գմբէթաձև. աստիճաններ, տանիքներ և յատակներ սալապատ. փայտաշէն բնաւ չը կայ, այս ամենն անհեթեթ ճարտարապետութեամբ շինուած են։ Գետ և աղբիւր չըլլալուն պատճառաւ անձրևի ջուր կը գործածեն. գործարաններ և արհեստանոցներ բնաւ չը կան. ժողովուրդը առևտրով կը զբաղի, նամանաւանդ հոգևորական նիւթեր ծախելով։

Երուսաղէմ 50,000 աղգաբնակութիւն ունի, 30,000 հրէայք են, 10,000 մահմետականք, և 10,000 քրիստոնեայք. շուկայի լեզուն արաբական է։ Եւրոպացիք գրեթէ կրաւեր են զերուսաղէմ քաղաքը, վասն զի ամեն կողմեր կառուցել են դեսպանատունք, վանատունք, վարժատունք, կուսաստան, հիւրանոցք և եկեղեցիք. շինութեանց կողմանէ առաջին տեղը գրաւեր են լատինք, երկրորդ յոյնք, երրորդ հայք և չորրորդ ռուսք. այս վերջինք կառուցել են մի նորաշէն եկեղեցի, մեծաշէն հիւրանոց Եաֆայի տունէն դուրս, և մի մեծ ուսումնարան հիմնարկել են շինելու. հիւրանոցը 1,000 սենեակէն աւելի կը պարունակէ իր մէջը։

Նոյնպէս Եւրոպիոյ միւս մեծ պետութիւնք ունեն իրենց սեպհական դեսպանատունք, վարժատունք, հիւրանոցք և եկեղեցիք. կերևի թէ այս լուսաւորեալ տէրութիւնք այլ դիտաւորութեամբ կը գործեն յԵրուսաղէմ։ Ս. Ցարութեան եկեղեցին Գողգոթայ լերան վերայ է և բոլորաձև, 28 արշին երկայնութիւն և 28 լայնութիւն ունի. մեծագործ գմբէթը 18 տափարակ սեանց վերայ բարձրացած կայ, որուն տակն է Քրիստոսի ս. գերեզմանը, մի ուրիշ քառակուսի ու փոքր սենեակի նման մարմարապատ գմբէթի մէջ, որ երկու պզտի դռնակներ ունի ներս մտնելու համար. ս. գերեզմանի կափարիչը 7 թիզ երկայն և 4 լայն է, որու վերայ ամեն օր պատարագ կը մատուցանեն, նախ յոյնք, ապա հայք, և ապա լատինք. Քրիստոսի գերեզմանին վերայ կան այս երեք ազգաց յատկացեալ սբ. Ցարութեան պատկերներ և 40 արծաթեայ ու ոսկեզօծեալ մշտավառ կանթեղներ։ Ս. Ցարութեան եկեղեցւոյն արևելեան կողմը, Քրիստոսի գերեզմանէն 5 քայլ հեռի կայ յունաց փառաւոր ու ճոխ եկեղեցին, հարաւային կողմը 15 քայլ հեռի է հայոց ժամատունը, իսկ հիւսիսային կողմը 20 քայլ հեռի է լատինաց մատուռը։ Այս երեք ազգեր ս. Ցարութեան եկեղեցւոյն կից ունեն վանատուներ, ուր կը բնակին քահանայք և միաբանք և գիշեր ցերեկ կը հսկեն ս. գերեզմանը, աղօթիւք և ժամերգութեամբ զբաղելով։ Այս եկեղեցւոյ մէջն է նոյնպէս Գիւտ խաչի մատուռը ի ձեռս հայոց։

Աւանդութեամբ մնացած միւս յիշատակաց արժանի տեղերն են Յովհաննու Մկրտչի և Պետրոս առաքելոյն բանտերը, Պրոպատիկէ աւազանը, որ 150 ոտնաչափ երկայնութիւն և 40 լայնութիւն ունի՝ այժմ ցամաքեալ և կէսը հողով ծածկեալ է։ Կայափայի տունը, ուր յոյնք եկեղեցի և մենաստան շիներ են. Անանա քահանայապետի տունը, ուր հայք եկեղեցի շինած են և Հրեշտակապետ անուանած. ասոր դաւթին մէջ Պետրոս երեք անգամ ուրացաւ զՔրիստոս, ուր կան այժմ հայոց պատրիարքաց և եպիսկոպոսաց մարմարեայ զարդարուն շիրիմներ. ասոր մօտն է այն վերնատունը, ուր Քրիստոս իր աշակերտաց հետ վերջին ընթրիքը ըրաւ, և առաքեալք զՀոգին Սուրբ ընկալան. ասոր տակն են կըսեն Դաւթի և Սողոմոնի գերեզմանները։ Սիոնի լերան վերայ կանգուն կայ տակաւին Դաւթի այն աշտարակը, ուր գրեց իւր Սաղմոսները. նոյնպէս ապարանք Պիղատոսի և Հերովդէսի կանգուն են, որոց մէջ կը նստի քաղաքապետը և իւր զօրքը։ Մորիոյ լերան վերայ պարսպապատ և ընդարձակ մի հրապարակ կայ 500 ֆրանսիական մեթրօ երկայնութեամբ և 300 լայնութեամբ. այս հրապարակին մէջն է եղեր Սողոմոնի հռչակաւոր տաճարը, որ այժմ մահմետականք մի մեծ մզկիթ շինել են, որ եօթ դուռ ունի և կլոր սիւներով եօթ կարգի բաժանված, 80 մեթրօ երկայնութեամբ և 80 լայնութեամբ քառակուսի ձևով. այս մզկիթի ներքնայարկը մեծամեծ կամարներ կան չորս հատ սիւներու վերայ կեցած. կըսեն թէ Սողոմոնի շինածներն են։

Սոյն մզկիթի դրսի կողմն է հրէից լացին տեղ, Սիոնի, Մօրիոյ, Ակրայ ու Գողգոթայի, և 100 ոտնաչափ բարձրութեամբ պարսպօք ու կիսաւեր աշտարակօք շրջապատեալ, չորս դուռ ունի՝ Եաֆայի, Դամասկոսի, ս. Ստեփանոսի, Դաւթի կամ Փրկչի։

Երուսաղէմայ արևմտեան կողմը դաշտային է, իսկ միւս կողմերն Գեհոնի, Յոսափատու, Գեթսեմանի և Հեղեղատի ձորերով շրջապատեալ։ Աւանդութեամբ կըսուի թէ Մելքիսեդէկ քահանան հիմնարկեր է 2,000 տարի Քրիստոսէ առաջ և կոչեր է Սալիմ (որ է խաղաղութիւն) և ապա կոչուեր է Երուսաղէմ։ Շատ մեծամեծ աւերումներ, կործանումներ, հրկիզութիւնք և աւարառութիւնք եղեր են յԵրուսաղէմ մինչև այս դարուս սկիզբները։ Օդը բարեխառն է և առողջարար. ամրան 6—7 ամիսները դրեթէ չի անձրևեր, և ձմեռ շատ ձիւն ու ցուրտ չըներ. շրջակայք քարոտ ու ժայռոտ ըլլալուն պատճառաւ մշակութիւն շատ սակաւ է. երկրին բերքն է ձիթենի, թուզ, խաղող, գարի և ցորեան սակաւ. անտառ բնաւ չունի։ Քաղքին փողոցները եղ և էջ ու անձուկ են, վասն որոյ ուղտ, էշ, ձի և ջորի միայն կը գործածեն իրենց պիտոյից համար, կառքի գործածութիւն չունեն. շուկաները ցած կամարներով սալայատակ և անշուք են, տուներ երկյարկ կամարակապ և գմբէթաձև. աստիճաններ, տանիքներ և յատակներ սալապատ. փայտաշէն բնաւ չը կայ, այս ամենն անհեթեթ ճարտարապետութեամբ շինուած են։ Գետ և աղբիւր չըլլալուն պատճառաւ անձրևի ջուր կը գործածեն. գործարաններ և արհեստանոցներ բնաւ չը կան. ժողովուրդը առևտրով կը զբաղի, նամանաւանդ հոգևորական նիւթեր ծախելով։

Երուսաղէմ 50,000 աղգաբնակութիւն ունի, 30,000 հրէայք են, 10,000 մահմետականք, և 10,000 քրիստոնեայք. շուկայի լեզուն արաբական է։ Եւրոպացիք գրեթէ կրաւեր են զերուսաղէմ քաղաքը, վասն զի ամեն կողմեր կառուցել են դեսպանատունք, վանատունք, վարժատունք, կուսաստան, հիւրանոցք և եկեղեցիք. շինութեանց կողմանէ առաջին տեղը գրաւեր են լատինք, երկրորդ յոյնք, երրորդ հայք և չորրորդ ռուսք. այս վերջինք կառուցել են մի նորաշէն եկեղեցի, մեծաշէն հիւրանոց Եաֆայի տունէն դուրս, և մի մեծ ուսումնարան հիմնարկել են շինելու. հիւրանոցը 1,000 սենեակէն աւելի կը պարունակէ իր մէջը։

Նոյնպէս Եւրոպիոյ միւս մեծ պետութիւնք ունեն իրենց սեպհական դեսպանատունք, վարժատունք, հիւրանոցք և եկեղեցիք. կերևի թէ այս լուսաւորեալ տէրութիւնք այլ դիտաւորութեամբ կը գործեն յԵրուսաղէմ։ Ս. Ցարութեան եկեղեցին Գողգոթայ լերան վերայ է և բոլորաձև, 28 արշին երկայնութիւն և 28 լայնութիւն ունի. մեծագործ գմբէթը 18 տափարակ սեանց վերայ բարձրացած կայ, որուն տակն է Քրիստոսի ս. գերեզմանը, մի ուրիշ քառակուսի ու փոքր սենեակի նման մարմարապատ գմբէթի մէջ, որ երկու պզտի դռնակներ ունի ներս մտնելու համար. ս. գերեզմանի կափարիչը 7 թիզ երկայն և 4 լայն է, որու վերայ ամեն օր պատարագ կը մատուցանեն, նախ յոյնք, ապա հայք, և ապա լատինք. Քրիստոսի գերեզմանին վերայ կան այս երեք ազգաց յատկացեալ սբ. Ցարութեան պատկերներ և 40 արծաթեայ ու ոսկեզօծեալ մշտավառ կանթեղներ։ Ս. Ցարութեան եկեղեցւոյն արևելեան կողմը, Քրիստոսի գերեզմանէն 5 քայլ հեռի կայ յունաց փառաւոր ու ճոխ եկեղեցին, հարաւային կողմը 15 քայլ հեռի է հայոց ժամատունը, իսկ հիւսիսային կողմը 20 քայլ հեռի է լատինաց մատուռը։ Այս երեք ազգեր ս. Ցարութեան եկեղեցւոյն կից ունեն վանատուներ, ուր կը բնակին քահանայք և միաբանք և գիշեր ցերեկ կը հսկեն ս. գերեզմանը, աղօթիւք և ժամերգութեամբ զբաղելով։ Այս եկեղեցւոյ մէջն է նոյնպէս Գիւտ խաչի մատուռը ի ձեռս հայոց։

Աւանդութեամբ մնացած միւս յիշատակաց արժանի տեղերն են Յովհաննու Մկրտչի և Պետրոս առաքելոյն բանտերը, Պրոպատիկէ աւազանը, որ 150 ոտնաչափ երկայնութիւն և 40 լայնութիւն ունի՝ այժմ ցամաքեալ և կէսը հողով ծածկեալ է։ Կայափայի տունը, ուր յոյնք եկեղեցի և մենաստան շիներ են. Անանա քահանայապետի տունը, ուր հայք եկեղեցի շինած են և Հրեշտակապետ անուանած. ասոր դաւթին մէջ Պետրոս երեք անգամ ուրացաւ զՔրիստոս, ուր կան այժմ հայոց պատրիարքաց և եպիսկոպոսաց մարմարեայ զարդարուն շիրիմներ. ասոր մօտն է այն վերնատունը, ուր Քրիստոս իր աշակերտաց հետ վերջին ընթրիքը ըրաւ, և առաքեալք զՀոգին Սուրբ ընկալան. ասոր տակն են կըսեն Դաւթի և Սողոմոնի գերեզմանները։ Սիոնի լերան վերայ կանգուն կայ տակաւին Դաւթի այն աշտարակը, ուր գրեց իւր Սաղմոսները. նոյնպէս ապարանք Պիղատոսի և Հերովդէսի կանգուն են, որոց մէջ կը նստի քաղաքապետը և իւր զօրքը։ Մորիոյ լերան վերայ պարսպապատ և ընդարձակ մի հրապարակ կայ 500 ֆրանսիական մեթրօ երկայնութեամբ և 300 լայնութեամբ. այս հրապարակին մէջն է եղեր Սողոմոնի հռչակաւոր տաճարը, որ այժմ մահմետականք մի մեծ մզկիթ շինել են, որ եօթ դուռ ունի և կլոր սիւներով եօթ կարգի բաժանված, 80 մեթրօ երկայնութեամբ և 80 լայնութեամբ քառակուսի ձևով. այս մզկիթի ներքնայարկը մեծամեծ կամարներ կան չորս հատ սիւներու վերայ կեցած. կըսեն թէ Սողոմոնի շինածներն են։

Սոյն մզկիթի դրսի կողմն է հրէից լացին տե-

«Новое Время» լրագրում կարդում ենք որ այս օրերս Պետերբուրգի քաղաքային վարչութիւնը հրատարակել է մի հետաքրքիր գրուածք, որ պարունակում է մայրաքաղաքի ազգաբնակութեան մասին ստատիստիական տեղեկութիւնները 1886 թուի համար։ Այդ տեղեկութիւններից երեւում է որ 1886 թուին, Պետերբուրգում, անտէր, անտուն, անապաստան, մշտական բնակարան չունեցող, շրջմոլիկ, անցաթուղթ չունեցող անձանց թիւը հասնում էր 80 հազարի։ Ուրեմն եթէ ընդունենք որ Պետերբուրգի ազգաբնակութեան ընդհանուր թիւը 1 միլիոնի է հասնում, ուրեմն անապաստան, շրջմոլիկ, անցաթուղթ չունեցողների թիւը մայրաքաղաքում կազմում է նրա ազգաբնակութեան ընդհանուր թուի 8 պրոցէնտը։

—

«Rigasche Zeitung» լրագիրը հաղորդում է, որ Ֆինլանդիայում ներկայումս կան 24 գիմնազիաներ, որոնց մէջ ուսանում են 4,000 աշակերտներ։ Սրանից 2,280 աշակերտներ ուսանում են ֆիննական դպրոցներում, մնացածները շվեդական դպրոցներում։ Ընդհանրապէս Ֆինլանդիայում վերջին ժամանակները մեծ առաջադիմութիւն է արել ֆիննական լեզուն, այն ինչ Ֆինլանդիայի մայրաքաղաքում, Հելսինգֆորսում, տիրապետող լեզուն դարձեալ համարվում է շվեդական լեզուն։ Հելսինգֆորսում թէ բարձրագոյն և թէ միջնակարգ ու ստորին դպրոցների ամբողջ թիւը 35 է, որոնցից 18-ի մէջ առարկաները աւանդվում են շվեդական լեզուով, իսկ 17-ի մէջ ֆիննական լեզուով։ Այդ 35 դպրոցներում ուսուցանում են 93 ուսուցիչներ և ուսուցչուհիներ, և ուսում են առնում 3,000-ից աւելի աշակերտներ։

—

Այս օրերս առանձին գրքոյկով լոյս տեսան Շուշում մեր աշխատակից Լէօի «Ծայրեր» վերնագիրը կրող գեղեցիկ պատկերները, որոնք տպված էին «Մշակի» մէջ։ «Ծայրերը» մեր աղքատ ժողովրդական գրադարանի մէջ անկասկած աչքի ընկնող տեղ կը բռնեն, և կը տարածվեն ժողովրդի մէջ, մանաւանդ որ այդ 134 երեսից բաղկացած գրքոյկի գինն էլ էժան է նշանակված, այն է 20 կոպէկ։

—

Իշխան կառավարչապետ Դոնդուկով-Կորսակով որը այս ամսի սկզբներին դուրս գնաց Թիֆլիսից, արդէն հասել է Պետերբուրգ։

—

Թիֆլիսի առևտրական վարչութիւնը վերջապէս կարողացաւ գումարել յունվարի 17-ին Թիֆլիսի 1 և 2 գիլդիայի վաճառականների ժողովը, որին ներկայ էին բազմաթիւ վաճառականներ։ Հերթական մի քանի հարցերը վերջացնելուց յետոյ, ժողովը զբաղվեց Թիֆլիսում մի առևտրական ուսումնարան հիմնելու հարցով։ Համակրելով այդ մտքին՝ ժողովը այնու ամենայնիւ վճռեց յետաձգել այդ օգտաւէտ մտքի իրագործումը, պատճառ բերելով որ հարկաւոր նիւթական միջոցներ չը կան։ Զարմանալի է ճշմարիտ, որ Թիֆլիսի առևտրական վարչութիւնը չէ կարողանում միջոցներ գտնել մի առևտրական ուսումնարան հիմնելու համար, որի կարևորութիւնը անկասկած ինքը ևս շատ լաւ զգում է, մանաւանդ որ վարչութեան այժմեան միջոցները 30 հազարից անցնում են։

—

Ցօղուտ Զէյթունի հրկիզեալների ստացանք 1) Թիֆլիսաբնակ տիկին Բալասան Խանդամիրեանից 25 ռուբլի, և 2) Եկատերինօդարից պ. Մկրտիչ Նաւասարդեանից, իր անուանակոչութեան տօնի առիթով, 10 ռուբլի։ Խմբագրատանը եղած նախկին 179 ռուբլու հետ միասին կը լինի 214 ռուբլի։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ շաբաթ օր, յունվարի 23-ին, լինելու է ԹԻՖԼԻՍԻ ժողովարանում կօնցերտ յօգուտ հրդեհից վնասված զէյթունցիների։ Կօնցերտին կը մասնակցեն տ. տ. Զարուդնայա, Զվիագինա, Իոզեֆովիչ, Լուբկովսկայա և պ.պ. Պրիանիշնիկով, Լոզի, Մեղվեդեվ, Կօրդանով և Իպոլիտով-Իվանով։ Կօնցերտի վերջում սիրողները և սիրողուհիները հայկական հագուստով կերգեն «Զէյթունցոց երգը»։ Կօնցերտից յետոյ կը լինեն պարեր։ Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ ժողովարանի դռնապանից։

—

Այրի տիկին Շուշանիկ Արարատեան ցանկանալով տպագրել իր հանգուցեալ ամուսին, ուսուցիչ Ալէքսանդր Արարատեանի գրական երկասիրութիւններից՝ «Գաւառական ուսումնարանի հիմնարկութիւն» վերնագրով վէպը հայ-դպրոցական կեանքից, դիմում է հանգուցեալի յիշատակը յարգող հայ ընթերցողներին՝ օգնելու յիշեալ վէպի հրատարակութեան, որից ստացած արդիւնքը կը ծառայէ նրա մատաղահաս որբերի օգտին։ Բաժանորդագինն է 50 կոպէկ։ Գրվել կարելի է Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ, որոնց տրված են դրքի բաժանորդագրական թերթը։

—

Ստացանք ՇՈՒՇՈՒՑ հետեւեալ նամակը։ «Այս ջրօրհնէքի տօներին, յունվարի 5-ին և 6-ին, մնաք, տեղիս մի քանի երիտասարդներս, տնից տուն «աւետիս» չրջելով, ժողովեցինք յօգուտ «Հայոց բարեգործական ընկերութեան» տեղիս ճիւղի՝ 277 ռուբլի 60 կոպէկ։ Խորին շնորհակալութիւն ենք յայտնում տեղիս հայ հասարակութեան, որ համակրելով բարեգործական նպատակին, չը խնայեց իր առատ նուէրները։»

—

Տեղական ռուս լրագիրները հերքում են իրանց հաղորդած այն լուրը, որ իբր թէ Թիֆլիսի զինուորական նահանգական դատարանի պրոկուրորի օգնական, պ. Տէր-Ստեփանով, թողնում է իր պաշտօնը, ստանձնելով երկուեալ հաւատարմատարի կոչումը։

—

ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ այս րօպէիս քաղաքագլխի ընտրութիւններ են կատարվում։ Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ այդ պաշտօնի համար կանդիդատները հետեւեալ անձինք են. հաշտարար դատաւոր Բակրաձէ, երդուեալ հաւատարմատար Լօլուա, նախկին քաղաքագլուխ Ասատիանի և Քութայիսի նահանգական դատարանի նախկին նախագահ Կայտմազով։ Ինչպէս երևում է այդ երկու վերջինները ամենից շատ հաւանականութիւն ունեն ընտրված լինելու։

—

Յունվարի 27-ից կը սկսվեն «Թիֆլիսի վարժուհիների փոխադարձ օգնութեան ընկերութեան» դասախօսութիւնները Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում։ Առաջին դասախօսութիւնը կը լինի յունվարի 27-ին, չորեքշաբթի օր, և այդ օրը կին-բժիշկ տիկին Խաչկեան կը կարդայ մի դասախօսութիւն, որի նիւթը վերցրած է ֆիզիօլոգիայից։

—

Ներկայ թուականին Պետերբուրգում, ինչպէս հաղորդում են այնտեղի լրագիրները, ենթադրութիւն կայ բանալու զինեգործութեան ցուցահանդէս, որի ժամանակ և տեղի կունենայ զինեգործների ժողով։

—

Այսօր, յունվարի 21-ին, բացվելու է կառավարչապետի պալատի մէջ այն պատկերահանդէսը, որի մասին անցեալ անգամ հաղորդեցինք և որը ամսի 19-ի փոխարէն, այսօր է բացվում։ Մուտքը 20 կոպէկ արժէ. միայն պատկերահանդէսի բացման առաջին օրը մուտքը 1 ռուբլի կարժենայ, իսկ հինգշաբթի օրերն էլ 50 կոպէկ. աշակերտները վճարում են մուտքի համար 10 կոպէկ։ Պատկերահանդիսից ստացված օգուտը յատկացվելու է Թիֆլիսի նկարչական դպրոցին։

—

Ստացանք յօգուտ զէյթունցիների 1) Վարչավայի հայերի մէջ պ. Մ. Զուրաբեանցի ձեռքով հանգանակած 76 ռուբլի (որից 30 ռուբլի ինքն Զուրաբեանցն է տուել), 2) Բաթումից, պ. Մ. Միհրանեանցից 10 ռուբլի և 3) Թիֆլիսի մի քանի հայ օրիորդներից, օր. Թ. Ս-եանցի ձեռքով հաւաքված 21 ռուբլի։ Նախկին 214 ռուբլու հետ, որ արդէն կար խմբագրութեան մէջ, զէյթունցիների օգտին մեզ մօտ կունենանք ընդամենը 321 ռուբլի։

—

Երկուշաբթի, յունվարի 18-ին, քաղաքային թատրօնում առաջին անգամ այս սեզօնում կառավարիչ պ. Պրիբիկի բենեֆիսին ներկայացվեցաւ Մէյերբերի «Робертъ Дьяволъ» օպէրան։ Պ. Պրիբիկ երեք տարի կառավարչի պաշտօն կատարելով, կարողացել է միանգամայնդրաւել հասարակութեան և մանաւանդ խմբի համակրութիւնը. ուրեմն զարմանալի չէ որ յարգելի բենեֆիցիանտին, նրա օրկէստրում երևալուց մինչև ճրագներ հանդցնելը ցոյց տուած օվացիաներին վերջ չը կար։ Նրան տրվեցան քսանից աւելի պսակներ հասարակութեան, դերասանների, երաժիշտների և խորի կողմից, որոնց թւում և մի քանի թանգագին ընծաներ։ Օպէրայի կատարումը ընդհանրապէս լաւ անցաւ։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԼԵՒՈՆ XIII ՊԱՊԸ

—

Զմիւռնիայում հրատարակվող «Courrier de Smyrne» լրագրի յունվարի 4-ի համարում կարդում ենք մի բաւական ընդարձակ յօդուած Հռոմի պապի յիսնամեակի յօբելեանը կատարելու մասին, որը քաղուածօրէն կամենում ենք ծանօթացնել մեր ընթերցողներին։

Յունվարի 1-ի այս վերջին կիրակին կաթոլիկ եկեղեցու գլուխը, Լեոն XIII պապը տօնեց իր քահանայադրութեան յիսնամեայ տարեդարձը։ Հռոմը այդ րօպէին ներկայացնում էր մի այնպիսի փառահեղ պատկեր, որպիսին երբէք տեսնված չէր եւրօպական ամենամեծ մայրաքաղաքներում ամենազօրեղ միապետների յիսնամեակը տօնելիս։ Բոլոր թագակիրները, բոլոր թագաւորող և իշխանական տները ուղարկեցին իրանց ներկայացուցիչներին Վատիկան շնորհաւորելու ս. Պետրոսի աթոռի հարուստ տիկին կառուցել է և գաւթի որմոց վերայ գրել տուել է «ՀԱՅՐ ՄԵՐ» աղօթք 30 ազգաց լեզուներով, որովհետև աւանդութեամբ կըսուի թէ Քրիստոս ասա ուսուցել է իւր աշակերտաց ՀԱՅՐՄԵՐՆ։

Ռուսներ 1868 թուին Համբարձման լերան վերայ նոր երկիր գնելով՝ կառուցել են մի վանատան եկեղեցի և զանգակատուն, որուն նման բարձր տակաւին չը կայ Երուսաղէմայ մէջ։

Այս նորաշէն վանատան մէջ գտեր են ռուսներ մոզայիկ արձանագրութիւնք հայոց։

Յորդանան գետը և Մեռեալ ծովը Երուսաղեմէն տաս ժամ հեռի են, դար ու գուբ և անհարթ ճանապարհներով։

Բէթղեհէմ, Երուսաղեմէն մէկ ու կէս ժամ հեռի է, մի տափարակ բլրուն վերայ շինուած ու ձորերով շրջապատած. 1740 տարի Քրիստոսէ առաջ կայ եղեր այս փոքր քաղաքը, որուն մէջ շատ երեւելի անձինք ծներ են, ինչպէս Դաւիթ մարգարէն, ս. Յովսէփ, Աստուածածին և Քրիստոս և այլն։

Բէթղեհէմ 5000 բնակիչ ունի, ամենքն էլ կաթոլիկ արաբացիներ են՝ արհեստաւոր ու հողագործ. երկիրը քարոտ ու լեռնոտ և անմշակ է. ձիթենի ծառեր շատ կան։ Քրիստոսի ս. ծննդեան եկեղեցին ընդարձակ և խաչաձև է, երկու կարգ 48 կլոր սիւներ երեք գծի կը բաժանեն. աւադ խորանին տակն է ծննդեան ս. այրը, ուր կիջցուի 15 ոտք երկու կողմնակի սանդուղներով, մինը յունաց և միւսը հայոց դասէն։ Քրիստոսի ծնած տեղը ճառագայթաձև մարմարեայ մի քար կայ, որու վերայ գրուած է լատիներէն (աստ ի կուսէն Մարիամայ ծնաւ Յիսուս Քրիստոս). այս ծննդեան վայրը կը պատկանի հայոց և յունաց, ուր ամեն օր կարգաւ կը պատարագեն. ասկէ երեք քայլ հեռի է սուրբ Մուրը, որ լատինացւոց կը պատկանի. 16 կանթեղք մշտավառ կը լուսաւորեն զսուրբ այրն. կանթեղներից 6 հայոց է, 6 յունաց և 4 լատինաց։ Ծննդեան սուրբ այրը 10 մեթրօ բարձրութիւն, 4 լայնութիւն և 3 բարձրութիւն ունի։

Հրացանակիր երկու տաճիկ զինուորք շարունակ կը հսկեն անդ որպէս զի զողութիւն և անկարգութիւն չը պատահի այս երեք ազգաց մէջ։

Հայոց ժամերգութեան տեղը և մատուռ սուրբ այրին դրան առաջն է, լատին կրօնաւորք հայոց այս դասին մէջէն անց ու դարձ կընեն, իրենց եկեղեցիին սուրբ այրը երթալու համար՝ որ 20 քայլ հեռի է։ Հայոց այս մատրան դրան վերայ գրուած կայ մի արձանագիր վասն յիշատակի Հեթումայ արքային հայոց, ի թուին ՌՀԶ. (1227)։

Բէթղեհէմի մէջ լատինք ունեն երեք ժողովրդական եկեղեցի, երեք ուսումնարան, մի որբանոց և մի մեծ հիւրանոց. իսկ հայք ունեն մի փոքր վանատուն և հիւրանոց, մի վարդապետով և 12 ժամարար միաբաններով։

Բէթղեհեմէն մէկ ժամ հեռի են Սողոմոնի երեք մեծադործ քարէ աւազաններ, որք 100 քայլ մէկզմէկէ հեռաւորութիւն ունեն. 150 մեթրօ երկայնութեամբ, 100 լայնութեամբ և 15 բարձրութեամբ, անձրևի և աղբիւրի ջրեր մէջերնին ժողվելով։ Մինչև ցայսօրս ջրամբարք են և Երուսաղէմայ ջուր կուտան։ Երուսաղէմէն երկու ժամ հեռի է (ոտքով) Յովհաննու Մկրտչի գիւղը և հօր նորա Զաքարիա քահանային տունը, ուր լատին կրօնաւորք շինած են մի եկեղեցի, վանատուն, վարժատուն և հիւրանոց, սեղան կանգնած են ի տեղւոջ անդ, ուր ծնաւ Կարապետն Յովհաննէս և այցելութեան գնաց Աստուածամայրն Մարիամ։ Անկէ երկու ժամ հեռի է քարայրն և անապատ Յովհաննու Մկրտչի, ուր նա ճգնեցաւ երկար տարիներ։

Ս. վ. Ե.

---

զը, ուր ամեն ուրբաթ երեկոներ կը ժողովին արք և կանայք, ծերք և տղայք կուլան, կողբան այն նուիրական պատին վերայ և զգալուստ Մեսիային կը խնդրեն յԱստուծոյ։ Ասկէ 20 քայլ հեռի նոյն հրապարակին մէջ կանգնած կայ Էօմէրի գմբէթաւոր փառաւոր մզկիթը, որ չորս դուռ ունի և 7 պատուհան՝ գոյնզգոյն ապակիներով շինուած, Ուռնայի կալին և Յակոբայ սանդուղին տեղը շինված է կրսեն։ Հայոց ազգի սեպհականութիւնք՝ ս. Յակոբայ վանքը և հիւրանոց կառուցեալ են Սիօնի լերան վերայ, որոնք 500 խուցերէ և սրահներէ կը բաղկանան. 22 մեթրօ երկայնութիւն և 16 լայնութիւն ունի եկեղեցին, աւագ խորանի ներքև ամփոփված է ս. Յակոբայ Ցն. եղբօր մարմինը, իսկ ձախ կողմի փոքր մատրան մէջ թաղուած է գլուխն Յակոբոս առաքելոյն որդւոյն Զեբեդիոյ։ Եկեղեցին պայծառ մի գմբէթ ունի, պատերը երկու մեթրօ բարձրութեամբ յախճապակեայ քարերով զարդարուած, անկէ վեր երկու կարգ հայոց հայրապետաց և զանազան սրբոց իւղաներկ պատկերներով շրջապատած։

Ս. Յակոբայ վանուց մէջ ամենէն աւելի փառաւոր մասն է ընդունելութեան սենեակը, որուն երկայնութիւն 21 մեթրօ է, իսկ լայնութիւնը 8. մէջտեղը մի գեղեցիկ գմբէթ կայ, սենեակը զարդարուած է պատրիարգաց և Եւրօպիոյ թագաւորաց պատկերներով, ասոր դիմացն է պատրիարգարան, մատենադարան և գանձարան, ուր կան շատ հին ձեռագրեր և եկեղեցական ոսկէ ու արծաթէ զարդեր։

Երուսաղէմայ հայոց միաբանքն առ այժմ կը բաղկանան 6 եպիսկոպոսներէ, 12 վարդապետներէ, 16 աշակերտներէ և 14 տիրացուներէ (այսինքն է ս. գերեզմանի ժամարարներէ)։ Ս. Յակոբայ Միաբանքն կարող են պանծալ իրենց անցեալով, վասն զի բազում ջանիւք և չարչարանաք՝ շատ դարերէ ի վեր պահեր պահպաներ են հայ ազգի իրաւունքներ ու սեպհականութիւններ այս սուրբ երկրին մէջ։

Երուսաղէմ քաղաքէն դուրս եղած սրբավայրքն են. ս. Ստեփանոսի դռնէն 50 քայլ հեռի կայ նոյն նախամարտիրոսի քարկոծման տեղը, անկէ կերթցուի ի ձորն Գէթսեմանի, յայնկոյս ձորոյն կայ Համբարձման լեռը, որուն ստորոտն է Գեթսեմանի պարտէզը, զոր լատին կրօնաւորք պարսպով շրջապատեր ու մի գեղեցիկ պարտէզ և ծաղկանոց շիներ են, և Քրիստոսի չարչարանաց պատկերներով զարդարեր, ուր կան ութ հնացեալ ձիթենիք, Քրիստոսին ժամանակակից։ Գեթսեմանի պարտեզէն 50 քայլ հեռի կայ սուրբ Աստուածածնայ գերեզմանը, որ մի ընդարձակ ու զարմանալի քարայրի մէջն է, 50 լայն աստիճաններէ վար իջնալով՝ մի խոռոչի մէջ և կամարակապ խորանի տակ կը տեսնուի Տիրամօր տապանը կանթեղներով ու լապտերներով լուսաւորուած. այս այրին մէջն է դարձեալ ս. Յովսէփայ, Յովակիմայ և Աննայի գերեզմաններն, և այս ամենն մի փառաւոր եկեղեցի կը կազմեն, ի ձեռս հայոց և յունաց։

Յովսափատու ձորը Համբարձման լերան ստորոտն է. այս յաւերժայիշատակ ձորը գրեթէ ամբողջովին գերեզմանատուն է հնուց մնացեալ. անուանի են շիրիմք և մահարձանք Աբիսողոմայ, Զաքարիա մարգարէին և Յովսափատ թագաւորին. ատ են դարձեալ Սելոամայ աւաղանը և Ակեղդամայ ագարակն։

Համբարձման լեռը Երուսաղէմայ արևելեան կողմն է, Գէթսեմանի ձորէն մինչև լերան գագաթը երեք քառորդ ժամ կը տևէ, ուրկէ ամենապարարտ տեսլեամբ կերևին Երուսաղէմ քաղաքը, Յորդանան գետը, Մեռեալ ծովը, Մովաբայ լեռները, Բէթանիա ու Բէթբաբէ գիւղերը։

Համբարձման լերան վերայ լատիններ ունեն մի փոքր եկեղեցի և վանատուն, զոր մի ֆրանսիացի հարուստ տիկին կառուցել է և գաւթի որմոց վերայ գրել տուել է «ՀԱՅՐ ՄԵՐ» աղօթք 30 ազգաց լեզուներով, որովհետև աւանդութեամբ կըսուի թէ Քրիստոս ասա ուսուցել է իւր աշակերտաց ՀԱՅՐՄԵՐՆ։

Ռուսներ 1868 թուին Համբարձման լերան վերայ նոր երկիր գնելով՝ կառուցել են մի վանատան եկեղեցի և զանգակատուն, որուն նման բարձր տակաւին չը կայ Երուսաղէմայ մէջ։

Այս նորաշէն վանատան մէջ գտեր են ռուսներ մոզայիկ արձանագրութիւնք հայոց։

Յորդանան գետը և Մեռեալ ծովը Երուսաղեմէն տաս ժամ հեռի են, դար ու գուբ և անհարթ ճանապարհներով։

Բէթղեհէմ, Երուսաղեմէն մէկ ու կէս ժամ հեռի է, մի տափարակ բլրուն վերայ շինուած ու ձորերով շրջապատած. 1740 տարի Քրիստոսէ առաջ կայ եղեր այս փոքր քաղաքը, որուն մէջ շատ երեւելի անձինք ծներ են, ինչպէս Դաւիթ մարգարէն, ս. Յովսէփ, Աստուածածին և Քրիստոս և այլն։

Բէթղեհէմ 5000 բնակիչ ունի, ամենքն էլ կաթոլիկ արաբացիներ են՝ արհեստաւոր ու հողագործ. երկիրը քարոտ ու լեռնոտ և անմշակ է. ձիթենի ծառեր շատ կան։ Քրիստոսի ս. ծննդեան եկեղեցին ընդարձակ և խաչաձև է, երկու կարգ 48 կլոր սիւներ երեք գծի կը բաժանեն. աւադ խորանին տակն է ծննդեան ս. այրը, ուր կիջցուի 15 ոտք երկու կողմնակի սանդուղներով, մինը յունաց և միւսը հայոց դասէն։ Քրիստոսի ծնած տեղը ճառագայթաձև մարմարեայ մի քար կայ, որու վերայ գրուած է լատիներէն (աստ ի կուսէն Մարիամայ ծնաւ Յիսուս Քրիստոս). այս ծննդեան վայրը կը պատկանի հայոց և յունաց, ուր ամեն օր կարգաւ կը պատարագեն. ասկէ երեք քայլ հեռի է սուրբ Մուրը, որ լատինացւոց կը պատկանի. 16 կանթեղք մշտավառ կը լուսաւորեն զսուրբ այրն. կանթեղներից 6 հայոց է, 6 յունաց և 4 լատինաց։ Ծննդեան սուրբ այրը 10 մեթրօ բարձրութիւն, 4 լայնութիւն և 3 բարձրութիւն ունի։

Հրացանակիր երկու տաճիկ զինուորք շարունակ կը հսկեն անդ որպէս զի զողութիւն և անկարգութիւն չը պատահի այս երեք ազգաց մէջ։

Հայոց ժամերգութեան տեղը և մատուռ սուրբ այրին դրան առաջն է, լատին կրօնաւորք հայոց այս դասին մէջէն անց ու դարձ կընեն, իրենց եկեղեցիին սուրբ այրը երթալու համար՝ որ 20 քայլ հեռի է։ Հայոց այս մատրան դրան վերայ գրուած կայ մի արձանագիր վասն յիշատակի Հեթումայ արքային հայոց, ի թուին ՌՀԶ. (1227)։

Բէթղեհէմի մէջ լատինք ունեն երեք ժողովրդական եկեղեցի, երեք ուսումնարան, մի որբանոց և մի մեծ հիւրանոց. իսկ հայք ունեն մի փոքր վանատուն և հիւրանոց, մի վարդապետով և 12 ժամարար միաբաններով։

Բէթղեհեմէն մէկ ժամ հեռի են Սողոմոնի երեք մեծադործ քարէ աւազաններ, որք 100 քայլ մէկզմէկէ հեռաւորութիւն ունեն. 150 մեթրօ երկայնութեամբ, 100 լայնութեամբ և 15 բարձրութեամբ, անձրևի և աղբիւրի ջրեր մէջերնին ժողվելով։ Մինչև ցայսօրս ջրամբարք են և Երուսաղէմայ ջուր կուտան։ Երուսաղէմէն երկու ժամ հեռի է (ոտքով) Յովհաննու Մկրտչի գիւղը և հօր նորա Զաքարիա քահանային տունը, ուր լատին կրօնաւորք շինած են մի եկեղեցի, վանատուն, վարժատուն և հիւրանոց, սեղան կանգնած են ի տեղւոջ անդ, ուր ծնաւ Կարապետն Յովհաննէս և այցելութեան գնաց Աստուածամայրն Մարիամ։ Անկէ երկու ժամ հեռի է քարայրն և անապատ Յովհաննու Մկրտչի, ուր նա ճգնեցաւ երկար տարիներ։

Ս. վ. Ե.

հռչակաւոր յաջորդին։ Արդէն մի քանի ամիս է, որ աշխարհիս ամեն ծայրերից անթիւ բարեպաշտ ուխտաւորներ և հաղարաւոր պատգամաւորութիւններ, չը նայելով ձմեռվայ ճանապարհի դըժուարութիւններին, դիմում էին Ցաւիտենական Քաղաքը։ Պատգամաւորութիւններ եկել էին Չինաստանից, Եպպոնիայից, Հնդկաստանից, օսմանեան կայսրութեան համարեա բոլոր նահանգներից, պաւօնական երկրներից, Գերմանիայից, մի խօսքով ամեն տեղից։ Վատիկանը և Հռոմի կայարանները լցված էին ամեն երկրներից սրբազան Հօրը ուղարկված նուիրաբերութիւններով և ընծաներով լի արկղներով, որոնցով մի ցուցահանդէս էին կազմել։ Քահանայապետը շնորհաւորութիւններ և ընծաներ ընդունեց աւստրիական կայսրից, նոյնպէս Վիկտորիա թագուհուց, որը անգլիական եկեղեցու գլուխն է համարվում, սպանիական թագուհուց, բողոքական եկեղեցու գլուխ գերմանական կայսրից, Պորտուգալիայի թագաւորից և նոյնպէս պարսից շահից։ Նա ընծաներ է ստացել Ֆրանսիական հանրապետութեան նախագահից, նոյնպէս և բողոքական Շվէյցարիայից, և մինչև անգամ Մ. Ֆրիդման, որ կրում է «օրթոդոքս հրէաների պապ» մականունը, ուղարկել է Լեոն XIII-ին, նրա յոբելեանի առիթով, շքեղ կազմված և թանդագին քարերով զարդարված մի հին աստուածաշունչ։

* *

Լեոն XIII եօթանասուն եօթ տարեկան է։ Նա 27 տարեկան էր, երբ քահանայ ձեռնադրվեց։ Դոն-Յոակիմ Պէչչի—այսպէս էր նրա ազգանունը աշխարհական ժամանակ—չուտով Գրիգոր XVI պապի ուշադրութիւնը գրաւեց իր վրա, որը իր տան քահանայ նշանակեց նրան։ 32 տարեկան հասակում արդէն Դամիէտտայի արքեպիսկոպոս ձեռնադրվելով, հետևեալ տարին Բրիւսել ուղարկվեցաւ որպէս պապի առաքելական դեսպան։ Այնտեղ եկեղեցին պետութիւնից բաժանելու հարցում նա կարողացաւ պաշտպանել եկեղեցու շահերը, և դեռ էլի շատ բան կարող էր անել, բայց կարդինալների քուէարկութեան համաձայն նա հրաւիրվեցաւ բաղմելու ս. Պետրոսի գահիվրա։ Դեռ 1846 թուին Պերուզայի արքեպիսկոպոս նշանակվեցաւ և կարդինալի կոչումն ստացաւ, սակայն կարդինալի կոչման մէջ միայն 1853 թուին հաստատվեցաւ, որովհետև Պիոս IX պապը նրան դեռ շատ երիտասարդ էր համարում։ 1876 թուին Հռոմ կանչվելով, նորին սրբութեան սենեկապետի պաշտօն ստացաւ. այդ պաշտօնում նա կառավարեց Վատիկանի գործերը Պիոս IX մահից յետոյ, որ պատահեցաւ 1878 թուի փետրվարի 7-ին։ Մի և նոյն ամսի 20-ին կարդինալների ժողովը պապ ընտրեց նրան և մարտի 3-ին կարդինալ Պէչչի հանդիսաւոր կերպով բաղմեց ս. Պետրոսի գահի վրա, ընդունելով Լեոն XIII անունը։

Երբ նա Պերուզայի արքեպիսկոպոս էր, նա գեղեցիկ կերպով կառավարում էր իր թեմը, և մինչև անգամ քաղաքական ցնցումից յետոյ, որի հետևանքն էր Հռոմի գրաւումն, նա մնաց հաշտ յարաբերութիւնների մէջ իտալական կառավարութեան հետ. այդ հանդամանքը աչքի առաջ ունենալով, հակակղերական մամուլը ուրախութեամբ ողջունեց նրա գահակալութիւնը։ Մամուլը «քաղաքագէտ պապ» և «օպորտունիստ պապ» մականունները տուեց նրան, և պապական աթոռի թշնամիները կարծում էին թէ Պիոս IX-ի յաջորդը աւելի հաշտ աչքով կը նայի դօգմայի և սկզբունքների հարցերի վրա։ Սակայն նրանք չուտով տեսան իրանց սխալը։ 1878 թուի Զատկի առիթով հրատարակած իր առաջին առաքելական թղթի մէջ, Լեոն XIII պարզ և որոշ խօսքերով նոյն պահանջներն էր անում, ինչ որ Պիոս IX-ը, այսինքն պապական նահանգի վերադարձնելը։

## ՏԻՍՍԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Մեր լրագրի անցեալ համարներից մէկում արդէն հաղորդեցինք ունդարայի պատգամաւոր Գելֆիի հարցապնդումների մանրամասնութիւնները՝ որոնք բաւական աղմուկ հանեցին ոչ թէ միայն գերմանական, այլ նոյն իսկ աւստրիական մամուլի մէջ։ Հեռագիրը լուր բերեց, որ Տիսսա պէտք է պատասխանի Գելֆիի հարցապնդումներին. այժմ հեռագրով մեզ հաղորդված են Տիսսայի պատասխանի գլխաւոր կէտերը, որոնք կայանում են հետևեալի մէջ. «Ոչինչ հիմք չը կայ, ասաց Տիսսա, կասկածելու այն պետութիւնների փոխադարձ բարեխղճութեան վերաբերութեամբ, որոնք իրանց մէջ պայման են կապել՝ յանուն խաղաղութեան պահպանութեան և յանուն իրանց սեփական ապահովութեան։ Ռուսաց զօրքերի դէպի պետութեան սահմանները մօտենալու պատճառով, առանց որ և է կասկած յարուցանելու ռուսաց կառավարութեան խաղաղասիրական յայտնութիւնների դէմ, և խուսափելով պատերազմ առաջ կանչելու ցանկութիւնից,—պարտաւորութիւն է զրվում հոգալու այն մասին, որ յամենայն դէպս ամեն բան կատարված լինի մեր սահմանների պաշտպանութեան և մեր զօրաբանակի պատերազմական պատրաստութեան համար»։ Շարունակելով խօսել եւրոպական դաշնակցութիւնների մասին, և ապացուցանելով, որ միջին-եւրոպական պետութիւնների դաշնակցութիւնը միշտ եղել է խաղաղութեան դաշնակցութիւն՝ ունենալով միմիայն պաշտպանողական բնաւորութիւն և հեռու լինելով յարձակողական նպատակներից, Տիսսա յոյս յայտնեց, որ խաղաղասէր կայսրներին և կառավարութիւններին կը աջողի պահպանել և ազատել Եւրոպան կասկածի այն ծանր զգացմունքներից, որի տակ նա գտնվում է ապագայի վերաբերութեամբ։

Անկասկած Տիսսայի այդ պատասխանը մի փոքր դոհանակութիւն կը պատճառի գերմանական շրջաններին, որոնց դէմ ուղղած էր Գելֆիի ճառի գլխաւոր մասը. բայց դժուար թէ կարելի լինի ապացուցանել, որ Տիսսա Եւրոպայի խաղաղութեան վերաբերութեամբ մի մխիթարական և հաստատուն միտք յայտնեց իր պատասխանի մէջ։ Այդ պատասխանի մէջ արտայայտվում է նոյն բարի ցանկութիւնը խաղաղութեան վերաբերութեամբ և նրա հետ միասին նոյն երկիւղը՝ Եւրոպայի այժմեան դրութեան վերաբերութեամբ, որոնք մի տարուց աւելի է ահա, որ անդադար լսվում են Եւրոպայի պարլամենտներում, ազգային ժողովներում, և քաղաքական բոլոր շրջաններում։

## ԹԻՒՐՔԻԱՅԻ ՊԱՐՏՔԸ

Յայտնի է, որ Թիւրքաց կառավարութիւնը՝ ռուս-թիւրքական պատերազմից յետոյ՝ իբրև պատերազմական կօնտրիբուցիա՝ պարտ է Ռուսաստանին մի ահագին գումար։ Այդ պարտքի հատուցումը դեռ մինչև այսօր էլ չէ վերջացել, և ի նկատի ունենալով Թիւրքաց ֆինանսների այժմեան ողորմելի վիճակը, ի նկատի ունենալով Թիւրքիայի պետական գանձարանի դատարկութիւնը, կարելի է ասել, որ այդ պետական պարտքը շատ էլ չուտով չէ կարող հատուցանվել։ Պոլսի դեսպան Նելիդով հէնց այս տարի արդէն մի քանի անգամ դիմել է այդ մասին Բ. Դրան, առաջարկելով վճարել այդ պարտքը։ Թիւրքաց կառավարութիւնը, որ այդ հարցի առիթով արդէն մի քանի տեսակ պատասխաններ է տուել, նորերումս յայտնեց, որ ինքը անկարող է այժմ կանոնաւորապէս վճարել այդ պարտքը, ըստ որում Փոքր-Ասիայի այն նահանգները, որոնք վճարում են այդ նպատակի համար հողի վրա դրած տասանորդական հարկ, ներկայումս սովի են ենթարկված, և կառավարութիւնը ստիպված է տասանորդական հարկի մի մասը գործ դնել նոյն իսկ այդ նահանգների աղքատ բնակիչների վրա։ Գոնէ այդպէս են բացատրում Թիւրքաց կառավարութեան պատճառաբանութիւնները եւրոպական շատ լրագիրներ, որոնցից մէկի, այն է «Politit. Correspondenz»-ի կարծիքը այդ հարցի վերաբերութեամբ սրանից մի քանի ժամանակ առաջ հաղորդեցինք «Մշակի» մէջ։ Խօսելով այդ կօնտրիբուցիայի հարցի մասին, եւրոպական լրագիրները մի քանի ժամանակից ի վեր արդէն լուր են հաղորդում, որ իբրև թէ Ռուսաստանը համաձայնութիւն է յայտնել այդ պարտքի փոխարէն գրաւել Էրզրումի վիլայէթը, որը, ինչպէս յայտնի է, այժմ Թիւրքաց իշխանութեան ներքոյ է գտնվում։ Բացի դրանից, «Հիւսիսային գործակալութիւնը» շատ սնդամ արդէն հաղորդել է, որ Թիւրքաց կառավարութիւնը առանձին խնամքով ամրացնում է Էրզրում քաղաքի ամրութիւնները, և ռուս-թիւրքական սահմանի վրա նոր ամրութիւններ է կառուցանում։ Բացի դրանից, նոյն «Հիւսիսային գործակալութիւնը» յունվարի 14-ից հաղորդեց արդէն «Kölnische Zeitung« լրագրի երկու լուրը, Էրզրումի դրաւելու և կովկասեան զօրաբանակներից մէկի դէպի աւստրիական սահմանը ուղարկելու մասին։ Այժմ Պետերբուրգի «Journal de St. Petersbourg» կիսապաշտօնական լրագիրը, ինչպէս հաղորդում է վերջին հեռագիրներից մէկը, հերքում է այդ վերջին երկու լուրը, ասելով, որ այդ լուրերը իրանք արդէն փոխադարձապէս միմեանց հերքում են, որովհետև եթէ Ռուսաստանը իրան վերագրվող դիտաւորութիւնները ունենար, չէր պակասեցնի իր զօրքերի թիւը Կովկասում։ Այդպիսով այդ բոլոր լուրերը բաւական միմեանց հակասող բնաւորութիւն ունեն, գլխաւորապէս Էրզրումի վիլայէթի վերաբերութեամբ. իսկ ինչ վերաբերում է Փոքր-Ասիայում հաւաքվող տասանորդական հարկը նոյն իսկ տեղական աղքատ ազգաբնակութեան պիտոյքների վրա դործածելուն, պէտք է ասել, որ դա մի վերացական նորութիւն է, քանի որ յիշեալ նահանգների ազգաբնակութիւնը թիւրքաց կառավարութիւնից ոչինչ նպաստ չէ ստանում, թէև նոյն իսկ հացի մեծ կարօտութիւն է զգում։ Բայց չը նայած այդ բոլորին, Թիւրքիան չէ վճարում պատերազմական կօնտրիբուցիան, և դրա փոխարէն ամենայն ճշդութեամբ շարունակում է հաւաքել Փոքր-Ասիայի նահանգներից տասանորդական հարկը։ Հարկը հաւաքվում է, բայց, տարաբաղդաբար, չէ վճարվում այն պարտքը, որի համար որ դրված է այդ նոր հարկը։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիէննայից գրում են, որ այնտեղի լրագիրների մի մասը այժմ այն համոզմունքն է յայտնում, որ Եւրոպայի այժմեան յուզված դրութեան պատճառը Բիսմարկի քաղաքականութիւնն է, որը աշխատում է վրդովել խաղաղութիւնը՝ Գերմանիայի պետական շահերի համար։

—Հեռագիրը արդէն լուր բերեց, որ Հավրում տեղի ունեցած անարխիստների ժողովում Լուիզա Միշէլ վիրաւորվեցաւ։ Ատրճանակ արձակողին ամբոխը սաստիկ կերպով ծեծեց։

—Արևելեան-Ռումէլիայի սահմանների վրա զօրքերի թիւը այժմ հասցրած է 60,000-ի։

—Սերբիայից հեռագրում են, որ Սերբիայում լրագրական գրաքննութիւնը սընչացվեցաւ, և սրբանից յետոյ լրագիրները կը հրատարակվեն առանց գրաքննիչի թոյլտուութեան, կատարելապէս ազատ կերպով։

—Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ «Kölnische Zeitung» հաստատում է, որ իբրև թէ Ռուսաստանը վճռել է այժմ իր արևելեան քաղաքականութեան նպատակները իրագործել ոչ թէ Բոլգարիայի միջոցով, այլ Սև ծովի կողմից, Փոքր-Ասիայի միջոցով։

—Լօնդոնի մի քանի լրագիրներ այն միտքն են յայտնում, որ լօրդ Ջերչիլի Ռուսաստան գնալը կապ ունէր այն լուրերի հետ, որոնք հաղորդում էին, իբրև թէ Անդլիան համակրում է երեք պետութիւնների դաշնակցութեանը և մտադիր է մինչև անդամ մասնակցել դրան։

—Բոսնիա-Հերցեգովինայի և բոլգարական հարցերի մէջ եղած կապի առիթով «Nord» լրագիրը, ինչպէս հեռագրում է մեզ Բրիւսէլից «Հիւսիսային գործակալութիւնը», յայտնում է, որ Ռուսաստանը երբէք չի մտադրվի կասկած արուցանել այն դիրքի դէմ, որը բռնում է այժմ Աւստրիան Բոսնիայում և Հերցեգովինայում. բայց ոչոքի համար դաղտնիք չէ, որ ունենալով այնտեղ միայն դրաւման և վարչական իրաւունքներ, Աւստրիան մտածում է վերջնականապէս միացնել այդ նահանգները իր հետ։ Կան մարդիկ, որոնք հաւատացնում են, որ Աւստրիան մինչև անդամ իր հայեացքները դարձնում է Հերցեգովինայի սահմաններից աւելի հեռու։ Քանի որ կոմս Կալնոկի չի յայտնի, որ Աւստրիան այդպիսի ցանկութիւն չունի, այդ դէպքում հաստատապէս կարելի է ասել, որ յիշեալ ցանկութիւնները հակառակ են ռուսաց շահերին։

—Կօբուրգեան պրինցի Արևելեան-Ռումէլիա գընալու առիթով «Nord» լրագիրը նկատում է, որ ոչ մի արհեստական ոգևորութիւն չէ կարող պաշտպանել պրինցին գահընկէց լինելուց։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բուդապէշտի մօտ այս օրերս մի օտարոտի և կրկնակի անձնասպանութիւն պատահեց։ Ատրճանակի գնդակի հարուածով վերջ դրին իրանց կեանքին միմեանց վրա սիրահարված յիսնամեայ Վիլհելմ Ֆիրեդի և տասնութամեայ օրիորդ Իրմա Գէյսլէր։ Ֆիրեդի ծանօթացաւ Գէյսլէրի հետ երկու տարի առաջ տպարաններից մէկում, ուր նրանք երկուսը ծառայում էին, և չուտով միմեանց վրա սիրահարվեցան։ Գէյսլէրի հետ պսակվել նա չէր կարող, որովհետև արդէն պսակված և ընտանիքի տէր մարդ էր։ Այդ հանդամանքը և այդ ծանր դրութիւնից դուրս գալու անկարելիութիւնը ստիպեցին սիրահարներին վերջ դնել իրանց կեանքին անձնասպանութեամբ։

* *

Երկրագնտիս վրա կույրերի ընդհանուր թիւը, «Deutsche Mediz. Zeitung» լրագրի խօսքերով, հասնում է 1 միլիօնի։ Կույրերի ամենախոշոր թիւը Կայիրէումն է, ուր 20 բնակիչների վրա մէկ կույր է գալիս։

* *

Վիկտորիա թագուհին բժշկապետ Մէկենզիի կնոջը ընծայեց մի հնդկական ոսկեկար չալ, որը ահագին արժողութիւն ունի։ Այդ ընծայի հետ տիկին Մէկէնզի ստացաւ թագուհուց նրա ինքնագիր նամակը հետևեալ բովանդակութեամբ. «Իմ փեսայի, գերմանական թագաժառանգի, բժշկութիւնը շատ յաճախ անվստահում էր ձեր ամուսնուն ձեղանից։ Ապացուցանելու համար թէ որքան գնահատում եմ ձեր ամուսնու կողմից արած այդ զոհաբերութիւնը, ուղարկում եմ ձեզ այս ընծան որպէս նշան իմ բարեհաճութեան։»

* *

Վոլտէր սիրում էր զանազան անեկդոտներ։ Մի օր Փարիզի մի գրավաճառ ուզենալով փող գցել Վոլտէրից, գրում է նրան հետևեալ նամակը։

«Պատահմամբ ձեռքս ընկաւ կծու և խայտառակ անեկդոտների մի պաշար, որոնց բովանդակութիւնը վերաբերվում է ձեր անձին։ Ես դիտաւորութիւն ունեմ անեկդոտները հրատարակել, բայց եթէ դուք ցանկանում էք, ես կարող եմ այդ ձեռագիրը ձեզ ծախել 100 ոսկով։»

Այդ նամակին Վոլտէր անմիջապէս պատասխանեց։

«Անչափ շնորհակալ եմ ձեզ ձեր առաջարկութեան համար, բայց բանն այն է, որ ես էլ բաւական մեծ քանակութեամբ ունեմ խայտառակ անեկդոտներ, որոնք իմ անձին են վերաբերվում և որոնց ես ինքս եմ գրել։ Սակայն եթէ ցանկանաք, ես կարող եմ այդ անեկդոտների պաշարը ձեզ ծախել 50 ոսկով։»

* *

Փարիզի «Journal Amusant» ծաղրական թերթում գտնում ենք հետևեալ պատկերը. մի թընդանօթի վրա նստած են Պրուսիան, Աւստրիան և Իտալիան և պատկերի տակ ստորագրված է հետևեալ նշանաւոր խօսքերը «Խաղաղութեան դաշնակցութիւն»։

# „ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

## ՀԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՄՕՍԿՎԱ, 18 յունվարի։ Երդուեալ հաւատարմատարների օգնականների երէկվայ ժողովում հարց յարուցվեց հրէաներին իրանց մէջ չընդունելու մասին։ Այսօր այրվեցաւ Բոգորոդսկ-Գլուխովի մանուֆակտուրային գործարանի բանտորների երկյարկանի բնակարանը, որի ժամանակ հինգ հոգի մեռան։

ՓԱՐԻԶ, 18 յունվարի։ Դամասկոսից եկած լուրերին նայելով, Թիւրքաց ոստիկանական սպան, 15 զինաւորված դործակալների հետ միասին՝ այժով ներս մտաւ տեղական ֆրանսիական հիւպատոսարանը և ձերբակալեց ֆրանսիական հպատակին, որը հետևում էր Աբդուլ-Կադերին աքսորանքի մէջ։ Հիւպատոսը իսկոյն դիմեց գրաւոր բողոքով գեներալ-նահանգապետին. Աբդուլ-Կադեր հեռագրեց նախագահ Կարնօին և ֆրանսիական դեսպան կոմս Մօնտեբելլօ եռանդուն կերպով բաւարարութիւն պահանջեց։

ՊՕԶՆԱՆ, 18 յունվարի։ Սլավինսկի և ուրիշ սոցիալիստների դործի վերաբերութեամբ դատարանը ամենամեծ պատիժ նշանակեց 2 տարի և 9 ամսվայ բանտարկութիւն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունվարի։ Բարձրագոյն հրամանով, 1887 թուի հոկտեմբերի 6-ին կառավարիչ սենատի առանձին ատեանում դատաստանի ենթարկվեցան՝ Օդեսայի բնակիչ Օրժիխ 23 տարեկան, մէչչանին Պէտրովսկի 26 տարեկան, Դոնի զօրքի հարիւրապետ Զերնով 25 տարեկան, ազնվական Ալէքսանդրին 24 տ. Տագանրոկի բնակիչ Սիդիդա 24 տ. նրա կինը Սիդիդա 25 տարեկան, հրաժարված աստիճանաւորի կին Տրինիտատսկայա 36 տարեկան և Ակկերմանի բնակչուհի Ֆէօդորովա 22 տարեկան, մեղադրվելով այն բանի մէջ, որ մասնակցելով յեղափոխական դաղտնի ընկերութեան, որը համարվում «Նարոդնայա Վոլիա»-ի կուսակցութեան բաժին, և որի նպատակն է յեղափոխական միջոցներով ոչնչացնել կայսրութեան մէջ դոյութիւն ունեցող պետական և հասարակական կազմակերպութիւնը, դրանք իրանց մօտ պահում

էին՝ յիշեալ ընկերութեան կողմից մտածած մի շարք տերրօրական մտադրութիւններ իրագործելու համար՝ բոլորովին պատրաստի պայթող գործիքներ. բացի դրանից, յիշեալ անձինքներից մի քանիս, հակակառավարչական պրոպագանդայի նպատակով բացել էին Տագանրօկ քաղաքում գաղտնի տպարան, որի գոյութիւնը երևան հանվեցաւ 1886 թւի յունվարի 23-ին։ Ցետաձգելով Օրժիխի գործի քննութիւնը՝ հիւանդութեան պատճառով՝ մինչև դրա առողջանալը, կառավարիչ սենատի առանձին ատեանը իր 1887 թւի դեկտեմբերի 8/9-ի վճռով, Պետրօվսկուն, Զերնօվին, Ալէքսանդրինին, Ակիմ և Նադէժդա Սիգիդաներին, Տրինիտատսկային, և Ֆեօդորովային մեղաւոր համարեց այն յանցանքների մէջ, որոնք նախատեսված են պատժական կանոնադրութեան 249-րդ յօդուածում, և դատապարտեց նրանց՝ բոլոր իրաւունքներից զրկելուն և մահվան պատժի՝ կախաղանի միջոցով։ Մի և նոյն ժամանակ սենատը վճռեց՝ ի նկատի ունենալով դատաստանական քննութեան միջոցով պարզված առանձնակի հանգամանքները՝ միջնորդել Նորին Կայսերական Մեծութեան մօտ, որպէս զի Զերնօվի, Ալէքսանդրինինի, Տրինիտատսկայի, Նադեժդա Սիգիդայի և Ֆեօդորովայի համար որոշված պատիժը փոխարինվի տաժանակիր աշխատանքով՝ աւելի կամ պակաս ժամանակամիջոց նշանակելով։ Վըճռի կայանալուց յետոյ, Պետրօվսկուց, Ակիմ Սիգիդայից, Զերնօվից, Ալէքսանդրինից և Նադեժդա Սիգիդայից ստացվեցան ամենահպատակ խընդիրքներ, որոնցով յիշեալ դատապարտվածները, անկեղծ սրտով ղղջալով, և մատնանիշ անելով այն բանի վրա, որ իրանք խառնված են եղել այդ յանցանքի մէջ աւելի փորձառու չարամիտների շնորհով, ամենահպատակ կերպով խնդրում էին թեթևացնել իրանց վիճակը։ Նորին Մեծութիւն թագաւոր Կայսրը բարեհաճեց ամենաողորմածաբար հրամայել. Պետրօվսկու, Սիգիդայի, Ալէքսանդրինի, Զերնօվի, Տրինիտատսկայի, Նադեժդա Սիգիդայի և Ֆեօդորովայի համար սենատի 1887 թւի դեկտեմբերի 8/9-ի վճռով որոշված պատիժը փոխարինել տաժանակիր աշխատանքներով, Պետրօվսկու և Սիգիդայի համար՝ անորոշ ժամանակով, Ալէքսանդրինի համար 18 տարով, Զերնօվի՝ 15 տարով, Տրինիտատսկայի 12 տարով, Նադեժդա Սիգիդայի և Ֆեօդորովայի 8 տարով, զրկելով նրանց ամեն իրաւունքներից։ «Journal de St. Pétersbourg» վճռականապէս հերքում է արտասահմանի լրագիրների այն լուրը, որ Բուխարեստի ռուսաց միսիան ընդհատել է իր յարաբերութիւնները ռումինական կառավարութեան հետ, այն պատճառով, որ միսիայի անդամներից մէկի ծառան ձերբակալված էր և արձակված է մի քանի ժամ անցնելուց յետոյ միայն։ Գործը սահմանափակված է բացատրութիւնների փոխանակութեամբ։—Նոյն լրագրի բօրսային բաժնում հերքվում է այն լուրը, թէ ռուսական փոխառութիւն պէտք է լինի Փարիզում։

ՄՕՍԿՎԱ, 19 յունվարի։ Այսօր դատաստանական պալատը հաստատեց նահանգական դատարանի վճիռը, որով կապանք է դրվում Կուրսկ-Կիեվի երկաթուղային ընկերութեան պատկանող կարողութեան վրա, որպէս զի ապահով լինի այն պահանջը, որը յայտնել է այդ ընկերութեան դէմ ֆօն-Դերվիզ, 1,278,908 ռուբլու գումարի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունվարի։ Հրատարակված են նոր հինգ կարգի սերիաներ 15 միլիօն ռուբլու արժողութեան. տոկոսը տարեկան 3,79։ Հրատարակված է Բարձրագոյն հրաման Վարչավայի ամրութիւնների և Կովնայի, Օսովեցկի և Միխայլովի ամրոցների սահմանների մասին, այլ և այն կանոնների մասին, որոնք պէտք է ի նկատի առնվեն մասնաւոր չէնքեր կառուցանելիս։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունվարի։ Երէկ թագաւոր Կայսրը հանդիսաւոր ունկնդրութիւն շնորհեց Պետերբուրգի նոր նշանակված իտալական դեսպան Մարօկէտիին։ «Правит. Вѣстн.» լրագրում հրատարակված է Կոպէնհագէնի 1888 թւի ցուցահանդէսի ռուսաց բաժնին վերաբերեալ կանոնադրութիւնը։ Սկզբնական յայտարարութիւններ տալու համար վերջնական ժամանակամիջոցը նշանակված է փետրվարի 15-ը, իսկ արդիւնքներ ուղարկելու համար Պետերբուրգում հիմնարկած ժողովատեղին նշանակված է մարտի 15-ը։ Առաջին զօրաբանակի հրամանատար Բարկլայ դէ-Տօլի արձակուրդ ստացաւ, թողնելով իր պաշտօնը և պահելով գեներալ-ադիւտանտի կոչումը, իսկ նրա տեղ նշանակվում է առաջին գվարդիական զօրաբաժնի հրամանատար Դանիլով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 20 յունվարի։ «Гражданинъ» լրագիրը հաղորդում է որ Պետերբուրգում չուտով կայանալու է ուսումնարանական շրջանների հոգաբարձուների ժողովը, գաւառներում եղած բարձրագոյն դպրոցների հարցը քննելու համար։ «Новое Время» լրագիրը հաւատացնում է որ վճռված է մեծացնել համալսարանների մէջ դասախօսութիւնների համար վճարը մինչև 50% այժմեան վճարից, մի և նոյն ժամանակ աստիճանաբար աւելացնելով 10 ռուբլի։

ԲԵՐԼԻՆ, 20 յունվարի։ Պատերազմական փոխառութիւնը որոշված է 278,335,562 մարկ։

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 20 յունվարի։ Էլզաս-Լոտարինգիայի դեկեդացիաի մէջ մինիստրի օգնական Շտուդ յայտնեց որ տէրութեանը յայտնի է թէ երկրում դաղտնի ագիտացիա է կատարվում, սակայն կառաւարութիւնը կը սահմանափակի իր գործողութիւնները դիմադրութեան անհրաժեշտ միջոցներով, որոնց պահանջում են կայսրութեան շահերը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յունվարի 19-ին

| | | | |
|---|---|---|---|
| Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. . | 115 ր. | 85 կ. |
| Համբուրգի վրա 100 մարկ — . . | 57 » | 20 » |
| Փարիզի վրա 100 ֆրանկ — . . | 45 » | 75 » |
| Ոսկի — արժէ — . . | 9 » | 30 » |
| Մաքսային կուպօններ — . . | 186 » | — » |
| Արծաթ — — — . . . | 1 » | 32 » |
| Բօրսային դիսկօնտներ — . | $6^1/_2$ և | $7^1/_2$% |
| Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի | 99 » | 75 » |
| — — — — 2-րդ — | 97 » | 75 » |
| — — — — 3-րդ — | 97 » | 75 » |
| — — — — 4-րդ — | 98 » | 75 » |
| — — — — 5-րդ — | 97 » | 75 » |
| — — — — 6-րդ — | — » | — » |
| Նոր 4% փոխառութիւն . . . . . | 81 » | 75 » |
| Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ. | 98 » | 25 » |
| — — 2-րդ — | 97 » | 50 » |
| — — 3-րդ — | 97 » | 50 » |
| Ներքին 5% առաջին փոխառութ. | 261 » | 50 » |
| — երկրորդ — | 246 » | 75 » |
| $5^1/_2$% բէնտա . . . . . | 103 » | — » |
| Ոսկեայ բէնտա . . . . . | 194 » | 50 » |
| Եօթերորդ կօնսօլիդած փոխառութիւն. . . . . | 164 » | 75 » |
| Նոր երկաթուղային բէնտա . . . | 97 » | 87 » |
| 5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. . . . . | 164 » | 12 » |
| Գրաւ. թղ. Ազն. բանկի . . . | 97 » | 87 » |
| $5^1/_2$% գրաւական թղթեր խերսօնի կալուած բանկի. . . . . | 99 » | — » |
| 6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան. | 102 » | — » |
| — — Պօլտավայի— — | 101 » | 50 » |
| — —Պետ.Տուլսկ.— — | 102 » | — » |
| — — Կիեվի — — | 101 » | 87 » |
| — — Մօսկվայի — — | 102 » | 25 » |
| — — Բեսարաբ. Տավր.— | 101 » | 50 » |
| — — Նիժ. Սամար. — | 101 » | 25 » |
| — — Վյինայի — | 101 » | 65 » |
| — — Թիֆլիսի—27 և 43 տ. | 98 » | 50 » |
| — —Քութայիսի-18 և 43 տ. | 98 » | 50 » |
| Վօլժսկօ-Կամսկի բանկի ակցիաները | 692 » | — » |
| Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. | 267 » | — » |
| Ռիբինսկ-Վօլոգդի ընկ. . . . . | 86 » | — » |
| Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ. . . . . | 94 » | 62 » |
| Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ . | 94 » | 50 » |
| Օդէսայի — — . | 94 » | — » |
| Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. . | — » | — » |

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ


Կիրակի, 24-ին յունվարի, առաւօտեան 11 ժամին, քաղաքային տան դահլիճում տեղի կունենայ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ընդհանուր ժողովը, քննելու և հաստատելու համար ընկերութեան խորհրդի և տեղական վարչութեանց 1886 թուականի հաշիւները և ներկայ 1888-ի նախահաշիւները։

1—2

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 29 յունվարի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ LE DONNAI (ԼԸ ԴՕՆՆԷ) նաւապետ BERNARD (ԲԵՐՆԱՐ) մտնելով Կ. Պոլիս, Զմիռնիա և Սիրա։

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գ. ԷՍՍԷՆԺԷՐ, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՈՒԲԵԱՆ ՀԵԶՈՒԲԵԱՆՑ։

1—3

1888 թ. Կ. Պոլսում կը շարունակվի հրատարակվել նոյն խմբագրութեամբ

„ԱՐԵՒԵԼՔ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԼՐԱԳԻՐԸ

Տարեկան բաժանորդագինն է օտար երկիրների համար 56 ֆրանկ
Վեց ամսվանը » » » 28 ֆրանկ

Հասցէն օտարերկրացիների համար՝ Direction du journal AREVELK, Noradoungian Han. Galata, CONSTANTINOPLE

2—2

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, լաւ կրթութիւն ստացած, 26 տարեկան (լութերական դաւանութեան), որը հիմնաւորապէս գիտէ գրապահութիւնը, հաշուապահութիւնը, երկրագործութիւնը, նոյնպէս և ռուսաց, լեհական և գերմանական լեզուները, մասամբ և ֆրանսիականը, որոնում է իր համար քարտուղարի, հաշուապահի, կամ սրա նման մի պաշտօն։ Նամակները խնդրում եմ ուղղել անմիջապէս Թիֆլիս, „ՄՇԱԿԻ“ խմբագրութեանը։

3—3

ՅՈՒՆՎԱՐԻ 10-ին Թիֆլիսի ժողովարանի պարահանդէսում ԿՈՐՑՐԱԾ Է ԲՐԱՍԼԷՏԻ ՄԻԶԻՆ ՄԱՍԸ, որ բաղկացած է ոսկով շրջապատված կարմիր գոյնի ա լ մ ա ն տ ի ն ասված քարից, որի վրա դրված է ադամանդներից A. տառը և ինքն քարը շրջապատուած է բրիլիանտներով։ Գտնողին խնդրում են հայտնել Թիֆլիսի ժողովարանի գրասենեակը, կամ Մելիք-Բեգլիարովի տունը, Ալէքսանդրեան այգու դիմաց, Օրբէլեան փողոց, տուն № 3.

3—3

ГАРМОНИКИ

ВНОВЬ ОТКРЫТАЯ ГАРМОННАЯ МАСТЕРСКАЯ

В. Д. Грецова, выдерживая огромную конкуренцію, назначаетъ цѣны на гармоніи очень низкія. Желая доставить возможность иногороднымъ мелкимъ торговцамъ получать гармоніи изъ первыхъ рукъ, высылаетъ имъ по письменнымъ требованіямъ и небольшими партіями, но не менѣе какъ на 25 рублей. Требованія безъ задатка въ 15% невыполняются. Цѣны отъ 13 коп. до 10 рублей.

Адресовать: Тула, улица Веневская, домъ Рылѣевой, В. Д. Грецову.

2—2 (Հ.)

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ
ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ КОРОБКА 50 и 80 К.
ГИГІЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ БОЛЬШ. ФЛАКОНЪ 60 К.
ГИГІЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ КОРОБКА 30 К.
СКЛАДЪ ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ и АПТЕК. МАГАЗ.

ՊՐՕՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԽԷՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՅԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՕԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկօվսկու և Ադմուրովի դեղատներում։ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ՝ Բէկկերի մօտ, ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ Կօկօչեվի մօտ, ՍՏԱՎՐՕՊՕԼՈՒՄ Բրօխնօցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ։ (Հ.)

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., домъ бывш. Шабурова).

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ։

ՀԱՆՔԱՑԻՆ ԶՐԵՐ, Կովկասեան և արտասահմանեան, այս գարնանը չիչերի մէջ նոր ածված-ՅԵՑԻՑ ԵՒ ՄԻԶԱՏՆԵՐԻՑ ՊԱՀՊԱՆՈՂ ՄԻԶՈՑՆԵՐ, Նաւթալին, քսմֆօրա, ցեց ոչնչացնող հեղուկ, Պարսկական և Դալմաթիայի փոշի, և Բուրէլի անթեմ կոչված բոյսը։

ՕԴԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐ պրօֆէսօր ԿԻՏՏԱՐԱՑԻ, կարբոլացրած փօշի երկաթի արճասպով, որպէս ամենալաւ միջոց անմաքրութեան տեղերը իտակելու համար, կարբոլեան թթուտ, մաքրված և չը մաքրված տեսակից, խլօրային կիր, ծծումբ, երկաթի արճասպ և Մարգանեցի կրկնաթթուտ։

81—100 (Հ.)

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

„ԶԻՆՈՒՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՕՆԱԴՐՈՒԹԻՒՆ“

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

Գինն է 30 կոպէկ

Վաճառվում է «Մշակի» խմբագրատանը և հետևեալ տեղերում. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կենտրօնական և ուրիշ գրավաճառանոցներում, ԵՐԵՒԱՆՈՒՄ՝ Կ. Դատամեանի խանութում, ԲԱԳԻՈՒՄ՝ Թառայեանի և Շիրազեանի խանութներում, ԳԱՆԶԱԿՈՄԻՄ՝ Աղայեանի խանութում, ՇՈՒՇԻ՝ Դաղեան եղբայրների գրավաճառանոցում, ՆՈՒԽԻ՝ ուսուցիչ Ն. Դաւթեանի մօտ, ԱԳՈՒԼԻՍ՝ ուսուցիչ Լևոն Թադէոսեանի մօտ, ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ՝ Վեհապետեանի խանութում։ Օտարաքաղաքացիք այդ գիրքը ստանալու համար պէտք է դիմեն հետևեալ հասցէով. Тифлисъ, Х. Малумянцу, въ редакцію Мшакъ.

1—10


Ց Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր


ՆԵՐԿԱՅ 1888 ԹՎԻՆ

„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ“

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Կը հրատարակվի ամեն ամսի սկզբին։ Բաժանորդագրութեան գինն է կանխիկ 8 ֆրանկ. Վեցամսեայ 5 ֆր. Մէկ համարը առանձին կը վաճառվի 1 ֆրանկ։

Հասցէն՝ A la Rédaction de la Revue «Handes» Au Couvent des RR. PP. Mechitaristes. A Vienne (Autriche) VII. Mechitharistengasse 4.

2—2


Дозволено цензурою, Тифлисъ 20 января 1888 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.